ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/05

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ՄՄՍ գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Մանուկյանի (պետական ռեգիստրի գրանցման համար՝ 29.110.996590),

քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ՄՄՍ գրուպ» ՍՊԸ-ի կողմից 12.01.2022թ. ներկայացված (12.01.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/05 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«ՄՄՍ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ՄՄՍ գրուպ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 12.01.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«05.01.2022 թվականին ժամը 11:30 ք. Երևան Մ.Խորենացի հասցեում ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43 ծածկագրով կայացած (միաժամանակյա բանակցությունների արդյունքում Ձեր կողմից կազմվել և հրապարակվել է թիվ 5 արձանագրությունը, որտեղ մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները չեն համապատասխանում բանակցության ընթացքում մասնակիցների կողմից բարձրաձայն հնչեցրած գնային առաջարկներին.

Մասնավորապես 2-րդ չափաբաժնի բանակցության ընթացքում, գների նվազեցման արդյունքում ձևավորվեց հետևյալ՝ առաջին, երկրորդ և երրորդ հերթականությունը

1-Ա/Ձ Տարոն Մելքոնյանը նվազեցրեց մինչև 16 980 000(տասնվեց միլիոն ինը հարյուր ութանասուն հազար) առանց ԱԱՀ

2-Ա/Ձ Հակոբ Սոսյանը նվազեցրեց մինչև 17 000 000(տասնյոթ միլիոն) առանց ԱԱՀ

3-«ՄՄՍ Գրուպ» ՍՊԸ՝ 33 000 000 (երեսուն երեք միլիոն) առանց ԱԱՀ

Բանակցությունները սկսվելուց առաջ գնահատող հանձնաժողովի և նիստին ներկա պատվիրատուի այլ անդամների կողմից պաշտոնապես հայտարարեց, որ մասնակիցների կողմից առաջարկվող գները ֆիքսելու և հետագայում հնարավոր անախորժություններից խուսափելու նպատակով բանակցության ընթացքը ամբողջությամբ ձայնագրվելու է և ձայնագրվեց: Քանի որ 2-րդ չափաբաժնի բանակցության ընթացքում հնչեցրած թվերի հերթականության վերաբերյալ մասնակիցների մոտ առաջացան լրացուցիչ պարզաբանման խնդիր, լսվեց ձայնագրությունը և ներկաների կողմից ևս մեկ անգամ հաստատվեց, որ 2-րդ չափաբաժինը ուներ վերը նշված հերթականությունը, սակայն N 5 արձանագրության մեջ տեղ է գտել անհամապատասխանություն:

Մասնակիցների կողմից բարձրաձայնած գները չեն համապատասխանում իրենց իսկ կողմից ներկայացված գրավոր թվերի հետ՝ մասնակիցը բարձրաձայնել է ավելի բարձր թիվ կամ ընդհանրապես բարձրաձայն չի նվազեցրել, սակայն հանձնաժողովի կողմից իրեն տրամադրված թերթիկի վրա անհիմն ներկայացրել է թիվ, որի պատճառով խախտվել է մյուս մասնակիցների մրցակցության իրավունքը և առաջին ու հաջորդաբար տեղեր զբաղեցնելու հերթականությունը, նույնիսկ ըստ N 5 արձանագրության նույն չափաբաժնի համար հանձնաժողովը ընդունել և արձանագրել է հավասար գնային առաջարկներ, որ գործնականում անհնար է, որովհետև բանակցության ընթացքում մասնակիցը նվազեցնում է գինը թեկուզ մեկ դրամով, բայց ոչ հավասար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում.

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է՝

1. ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43 ծածկագրով գնահատող հանձնաժողովին դադարեցնել պայմանագիր կնքելու որոշումը:

2. Պարտավորեցնել՝ ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43 ծածկագրով գնահատող հանձնաժողովին վերագնահատել գների նվազեցման շուրջ բանակցության 05.01.2022 թվականի N 5 արձանագրությունը՝ արձանագրել մասնակիցների կողմից իրական բարձրաձայն նվազեցրած գների հերթականությունը ըստ ձայնագրության հիմք՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-ն որոշման գնումների գործընթացի կազմակերպման կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետը կամ հրավիրել գների նվազեցման շուրջ նոր բանակցությունների:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.01.2021թ. ժամը 09:12-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված բողոքը:

2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 14.01.2022թ. թիվ 1/18-2/2536-2022 գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ի պատասխան Ձեր 13.01.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/549-2022 գրության՝ հայտնում եմ, որ բանակցությունների անցկացման հստակ ձև կամ ընթացակարգ գնումների օրենսդրությամբ սահմանված չէ, հետևաբար հանձնաժողովն է որոշում անցկացման ընթացակարգը:

Բանակցության սկզբում հայտարարվել է, որ ամեն չափաբաժնի համար տրվելու է ժամանակ գնային առաջարկ ներկայացնելու նպատակով և բացի այդ նոր գնային առաջարկները բարձրաձայնվելու են, իսկ սահմանված ժամանակի ավարտից հետո մասնակիցները կարող են իրենց թերթիկների վրա ներկայացնել նաև վերջին հայտարարված գնային առաջարկից ավելի ցածր գնային առաջարկ, որը ֆիքսվելու է որպես վերջնական: Այդ նույն ընթացակարգով պետք է ընթանար ամբողջ բանակցությունները:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ բանակցությունները նպատակ ունեն պետության համար գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում ապահովել:

Երկրորդ խնդրի վերաբերյալ, հայտնում ենք, որ մասնակիցը ինքն է որոշում, թե ինչ գնային առաջարկ ներկայացնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքով հավասար գնային առաջարկ ներկայացնելու սահմանափակում չկա:

Միաժամանակ կից ներկայացնում եմ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար Ձեզ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.01.2022թ. ժամը 09:12-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «ՄՄՍ գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել 2022 թվականի հունվարի 05-ին ժամը 11:30-ին առաջարկված գների իջեցման բանակցություններ հրավիրելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.01.2022թ. թիվ 5 արձանագրության բանակցությունների արդյունքների մասին թիվ 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ մասնակիցները ներկայացել են բանակցություններին և նվազեցրել ներկայացված գնային առաջարկները, մասնավորապես՝

Հ/Հ	Ա/Ձ Կարինե Բախշինյան	Ա/Ձ Տարոն Մելքոնյան
	Գնային առաջարկ առանց ԱԱՀ	
1	29 900 000	23 000 000
2	32 500 000	16 980 000
3	27 890 000	24 475 000
4	20 500 000	20 515 000
5	42 960 000	23 668 888

4. Նույն արձանագրության բանակցությունների արդյունքների մասին թիվ 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Ա/Ձ Տարոն Մելքոնայնին 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով, իսկ Ա/Ձ Կարինե Բախշինյանին 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակիցներ ճանաչելու վերաբերյալ:

5. «ՄՄՍ Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Մասնակիցների կողմից բարձրաձայնած գները չեն համապատասխանում իրենց իսկ կողմից ներկայացված գրավոր թվերի հետ՝ մասնակիցը բարձրաձայնել է ավելի բարձր թիվ կամ ընդհանրապես բարձրաձայն չի նվազեցրել, սակայն հանձնաժողովի կողմից իրեն տրամադրված թերթիկի վրա անհիմն ներկայացրել է թիվ, որի պատճառով խախտվել է մյուս մասնակիցների մրցակցության իրավունքը և առաջին ու հաջորդաբար տեղեր զբաղեցնելու հերթականությունը (...)»:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՄՄՍ գրուպ» ՍՊԸ-ի 12.01.2022թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 14.01.2022թ. թիվ 1/18-2/2536-2022 գրությամբ հայտնած դիրքորոշումը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են

միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները):

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում,

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի:

Այսպես՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «ՄՄՍ գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել 2022 թվականի հունվարի 05-ին ժամը 11:30-ին առաջարկված գների իջեցման բանակցություններ հրավիրելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.01.2022թ. թիվ 5 արձանագրության բանակցությունների արդյունքների մասին թիվ 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ մասնակիցները ներկայացել են բանակցություններին և նվազեցրել ներկայացված գնային առաջարկները, մասնավորապես՝

Հ/Հ	Ա/Ձ Կարինե Բախշինյան	Ա/Ձ Տարոն Մելքոնյան
	Գնային առաջարկ առանց ԱԱՀ	
1	29 900 000	23 000 000
2	32 500 000	16 980 000
3	27 890 000	24 475 000
4	20 500 000	20 515 000
5	42 960 000	23 668 888

Նույն արձանագրության բանակցությունների արդյունքների մասին թիվ 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Ա/Ձ Տարոն Մելքոնայնին 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով, իսկ Ա/Ձ Կարինե Բախշինյանին 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակիցներ ճանաչելու վերաբերյալ:

«ՄՄՍ Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Մասնակիցների կողմից բարձրաձայնած գները չեն համապատասխանում իրենց իսկ կողմից ներկայացված գրավոր թվերի հետ՝ մասնակիցը բարձրաձայնել է ավելի բարձր

թիվ կամ ընդհանրապես բարձրաձայն չի նվազեցրել, սակայն հանձնաժողովի կողմից իրեն տրամադրված թերթիկի վրա անհիմն ներկայացրել է թիվ, որի պատճառով խախտվել է մյուս մասնակիցների մրցակցության իրավունքը և առաջին ու հաջորդաբար տեղեր զբաղեցնելու հերթականությունը (...)»:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը Պատվիրատուին ուղղված 12.01.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/549-2022 գրությամբ ներկայացրել է պահանջ գնահատող հանձնաժողովի 05.01.2022թ. նիստի N 5 արձանագրության համաձայն հրավիրված բանակցությունների վերաբերյալ տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը տրամադրելու վերաբերյալ, որպիսի պահանջը Պատվիրատուի կողմից կատարվել է:

Ձայնագրության ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ հետևյալը.

«1. Բանակցությունների անցկացման նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտարարում է, որ առաջարկվող վերջնական գինը պետք է գրել թղթերի վրա, ստորագրության դաշտում ստորագրել այնուհետև բարձրաձայնել: Նույնիսկ ով գին չի իջել, բանակցությանը չի մասնակցել նույնպես պետք է գրի իր վերջնական գինը:

2. Մասնակցի այն հարցին, որ եթե Ընկերությունը չի մասնակցել բանակցությանը կարող է նվազագույն գին գրել, հանձնաժողովի քարտուղարը պատասխանում է իհարկե, վերջին հնչեցրած գնից նվազագույն գին»:

Հաշվի առնելով, որ բողոքի քննության առարկա հանդիսացող խնդիրն Ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով նույնաբովանդակ է, հետևաբար, որպես օրինակ, հարկ եմ համարում արձանագրել միայն 1-ին չափաբաժնով Ա/Ձ Տարոն Մելքոնյանի կողմից ներկայացված գնային առաջարկը, մասնավորապես վերջինս բանակցությունների ընթացքում՝ մինչև բանակցությունների անցկացման համար սահմանված վերջնաժամկետը որպես գնային առաջարկ ներկայացրել է 32.500.000, իսկ նիստի ընթացքում իբրև հանձնաժողովի անդամների կողմից սահմանված ձևին համապատասխան ներկայացված թղթի վրա գրել և որպես գնային առաջարկ ներկայացրել է 23.000.000:

Ինչպես նաև Պատվիրատուն 14.01.2022թ. թիվ 1/18-2/2536-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Բանակցության սկզբում հայտարարվել է, որ ամեն չափաբաժնի համար տրվելու է ժամանակ գնային առաջարկ ներկայացնելու նպատակով և բացի այդ նոր գնային առաջարկները բարձրաձայնվելու են, ***<u>իսկ սահմանված ժամանակի ավարտից հետո</u>***

մասնակիցները կարող են իրենց թերթիկների վրա ներկայացնել նաև վերջին հայտարարված գնային առաջարկից ավելի ցածր գնային առաջարկ, որը ֆիքսվելու է որպես վերջնական: Այդ նույն ընթացակարգով պետք է ընթանար ամբողջ բանակցությունները»:

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ ***վարվում են միաժամանակյա բանակցություններ***, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները):

(...)

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. ***բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին***, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

(...)

Այսպիսով՝ վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում, արձանագրում եմ, որ ***գների նվազեցման շուրջ***

բանակցությունները պետք է լինեն միաժամանակյա և մինչև դրանց համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահը մասնակցի ներկայացրած գնային առաջարկը պետք է հրապարակվի մյուս մասնակիցների համար, <u>որի արդյունքում մասնակիցը կարող է վերանայել իր կողմից ներկայացված գնային առաջարկը միայն մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը,</u> ինչն էլ կապահովի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով գնման գործընթաց, մինչդեռ՝ ստացվում է, որ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը՝ 10 րոպեն, լրանալուց հետո մասնակիցների կողմից առաջարկվող գները գրվել են թղթերի վրա, որոնց հրապարակման արդյունքում պարզ է դառնում, որ դրանից ոչ բոլորն են համընկնում բանակցությունների ընթացքում՝ մինչև բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալը բարձրաձայնված գներին, ուստի գտնում եմ, որ 05.01.2022թ. անցկացված բանակցությունները չեն բխում վերը շարադրված իրավական նորմերով սահմանված բանակցությունների վարման տրամաբանությունից, որպիսի փաստը հաստատվել է նաև Պատվիրատուի 14.01.2022թ. թիվ 1/18-2/2536-2022 գրությամբ, այն է՝ բանակցության սկզբում հայտարարվել է, որ ***<u>ամեն չափաբաժնի համար տրվելու է ժամանակ գնային առաջարկ ներկայացնելու նպատակով և բացի այդ նոր գնային առաջարկները բարձրաձայնվելու են, իսկ սահմանված ժամանակի ավարտից հետո մասնակիցները կարող են իրենց թերթիկների վրա ներկայացնել նաև վերջին հայտարարված գնային առաջարկից ավելի ցածր գնային առաջարկ, որը ֆիքսվելու է որպես վերջնական</u>***, այդ նույն ընթացակարգով պետք է ընթանար ամբողջ բանակցությունները:

Այսպիսով՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի անդամների, ինչպես նաև հանձնաժողովի քարտուղարի կողմից խեղաթյուրվել են բանակցությունների անցկացման տրամաբանությունն ու դրանց վարման նպատակը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ պետք է հրավիրվեն նոր բանակցություններ, որոնց ընթացքում կպահպանվեն վերը շարադրված իրավական նորմերով սահմանված պահանջները, որի արդյունքում հրավիրված միաժամանակյա բանակցությունները կծառայեն իրենց նպատակին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՄՄՍ գրուպ» ՍՊԸ-ի կողմից 12.01.2022թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43 ծածկագրով գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 05.01.2022թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումները, այդ թվում՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը և հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**